

խեան պայպիսի անմիտարան պատակաւուն ան-
կարող կ'ընէ, զինք իրմէ ակնկալուած ամէնէն
կարեւոր ծառայութիւնը մատուցանելու: Այլ-
սենք թէ, Հ. Գարրիէլ Վ. Մէնէվիշեան քանի
մը տարի առաջ գաղտնի լուսնեցի է լինելու Գրա-
րարի նոր Բառարան մը շինելու, և այս մտօք
բաւական պաշար ալ հաւաքեր է, բայց երեք
տարի է ի վեր որ դատապարտուել է Պոլիս ան-
ցնելու գաղտնիկան գործով, բարձի թողի է,
ըրեւր այդ աւելի կարեւոր ձեռնարկութիւնը:
Մեր կարծեօք, այսքան բաղմունքով և հմտա-
լից աշխատութեան մը համար միայն Մէնէ-
վիշեան վարդապետը պիտի յրաւէր: Գէթ այս
աւագ ձեռնարկութեան մէջ, Միտրանութեան
երկու հատուածները պէտք է ձեռք ձեռքի
տան, նպատակ ունենալով ոչ միայն Գրարարի,
այլ բովանդակ Հայ լեզուին Բառարանն յորի-
նելու, և եթէ մաս առ մաս ալ հրատարակեն,
հայ Մամուլն աջակցութեան վստահ կրնան
ըլլալ գնորդներու, բաժանորդներու բաւական
ստուար թիւ մը ունենալու, որպէս զի ծախ-
քն ալ գէթ մասամբ հայ թայթիսն մէկ կողմէ:
Մինչև որ այս էական խնդիրը լուրջ հոգա-
ծութեան առարկայ չընեն, Միտրանեանք ի-
րենց կոչումին և պարտաւորութեան մէջ թե-
րացած պիտի թուին միշտ քանի հարիւրե-
րորդ Յորեկեան ալ տօնեն:



ՍԱՆԱՀԻՆ ՎԱՆՈՅ ԾՆՃՂՈՒԿ.

Թող առաջին, դարձեալ կրկին
Տէր յաջողեց, ես ուխտ եկի
Հռչակաւոր վանք Սանահին:
Թէ ողջ լինէր Երաւակրկեան,
Տէր Օհանէս Հիւնքեարպէյէնտեան,
Ստուգաբանէր թէ սա է հին
Այս, հնացել է Սանահին
Բարոյապէս և նիւթապէս:
Ուր են այնչափ վաստակատէր,

Տքնող գրող վարդապետներ, . . .
Աւագ, շիրիմք են մնացել,
Երբ կենդանի սուրբ տաճարներ
Երկնից կայան են փոխուել,
Ո՛հ, մնացեր են ամայի
Քարէ շինուած ձեռագործներ,
Հոյակապ, ճարտարարուեստ,
Հիանալի—գարմանալի:
Մեր Սանահին պերճ հնութեանց
Այս է մնացել միայն յիշատակ:
Հազար ախոս, գուցէ այն ևս
Անհետ լինի տակաւ տակաւ,
Թէ չհասնի ձեռք նախախնամ,
Որ նորոգէ և պահպանէ:
Կնց դու, մի գար, որ դժպտակէ.
Եւ վայ առուրն այն չարաբեր,
Երբ հնութիւնք մեր չքանան.
Ո՛հ, ով լինի վկայ յայնժամ,
Թէ էր և կայ Հայոց աշխարհ:
Եթէ մարդկանց լեզուք լռեն,
Մեր տաճարներ բողբ բառնան.
Խաչաքարեր, մահարձաններ
Լեզու լինին ու բարբառին,
Եւ աղաղակ հանեն յերկինս:
Տէր, դու լսիր և մի ջնջեր
Հայոց փառաց յիշատակներ:
Թողում ես աստ օղբական բան,
Ծնճղուկին սկսեմ բան:

Իմ իջեան էր մի խցիկ,
Էնպէս՝ ինչպէս գեղջուկ տնիկ,
Այլ ինձ համար քաղցր էր և դիւր,
Դան վեհարան իմ փառաշուր:
Իմ խցիկիս առաստաղում
Բոյն էր դրել մի ճնճղուկ.
Դարուն էր, Ապրիլ ամսում.
Խեղճ ճնճղուկ տի նստէր թուխս,
Հանէր ձագեր իւր սիրասուն:
Երբ լուսամուտն ես փակեցի,
Էլ չէր կարող մուտ ել անել.
Անդադար գար ու նստէր
Լուսամուտին մօտ՝ ինձ ի դէմ,
Կոցահարէր ապակի դուռն,
Թըկ—թըկ անէր, բան խօսում էր:
Թուէր թէ ասէր. «Բաց որ մանեմ,
Նստիմ ի թուխս չինած բնիկս.
Ասեն, գլխած ես, ով Հայրիկ,

Բայց հալածես զիս իմ բունէս:
Ա՛խ, անցնում է անուշ դարուն,
ես մնում եմ տառնց ձագունս:

Ասի. «Ճնճղուկ, ես հիւր եմ՝ քեզ,
Ձիւ մի առներ դու անհանգիստ.
Այսօր եկի և վաղ կերթամ,
Ձեմ գրաւեր քո բնակավայր.
ես անցաւոր եմ, անցաւոր,
Դու սեփական տէր ես վանուց:
Դու հէր թողուս մեծ տաճարներ,
Կամարներու բարձր տեղեր,
եւ եկել ես, բոյն ես գրել
Յամ ու անձուկ խրճիթի մէջ,
Ուր բնակին անթիւ մարդիկ,
Դու թեաւոր ես, ով թռչնիկ»:

Ասաց ճնճղուկ. — «Մենք ընտանի
Մարդամօտ եմք, ինչպէս գրացի,
Մեր ապաստան են լաւ մարդիկ,
եւ մեծ թռչուն՝ գլխած արագիլ,
Որ շինում է բոյն բարձրադիր:
Ճնճղուկներս երթամք վատահ,
Շարուկնք բունին չորս բոլորտիք,
Ինչպէս ասում է հայր Դաւիթ,
Թէ «արագիլ բոյն բարձրաշէն
Ապաւէն է ճնճղուկին,
Որ պահպանէ չար բաղէէն»:
Երբեմն երթայ մեր արագիլ,
Մեր թշնամի օձն սպանէ,
Ճէլան—ճէլան կտցէն ի կախ
Առնէ բերէ մինչև ի բոյն.
Սուր դանակ է իւր կտուց,
Կտոր—կտոր առնէ իւր որս.
Սեղան կաղմէ զերթ տանտիկին,
Բաժին—բաժին տայ ձագերուն.
Մեզ չէ ինչ փոյթ, չունիմք բաժին,
Մեք հատակեր ճգնաւոր եմք:
Ասէք, ինչո՞ւ թողուք այնչափ
Այդ բարձրաշէն մեծ տաճարներ,
Ուր բոյն դնել ապահով է՝
Բան այսպիսի ցածուն տեղեր:
Փոքրիկ—փոքրիկ ճնճղուկներուս
Փոքրիկ խցեր են վայելուչ,
Ձեմք արժանի մեք տաճարին.
Մեք չքոտի համարուած եմք.
Քրիստոս մեր գին աժան է դերբ.
Մեր հինգ ձագեր խիստ գիւրադին

Երկու դանկի վաճառում են:

Տաճարներու արժանաւոր
Այլ երաժիշտ թռչուններն են.
Մեր ճնճղկանց աղօթարան
Ծառոց ճօճան ճղերն են.
Թէ իրիկուն, թէ առաւօտ
Ճլուետելով աղօթում ենք:
Մեր շարական միաձայն է.
Մեզ չէ տուեալ ի բնութենէ
Փոփոխաձայն դեղձեղանքներ:
Իսկ տաճարին աղօթաւորք
Այլ տիրացուքն են համերգողք.
Մարեակ, ծիծառք և աղանիք,
Դաղցրախօսիկ և մրմնջողք,
Ձայնակցեալ փառաբանեն
Հոգացող հայր մեր երկնաւոր,
Որ տայ մեզ օր ըստ օրէ
Կուտ և պարէն առատօրէն:

Է՛հ, դու, հայրիկ, հերիք մնաս.
Դու տեսնում ես, վանքն աղքատ է,
Թէ հիւր ես դու, բաւ է այսչափ,
Դուժ արա ինձ, բաց իմ դռնակ,
Դամ ես աղատ, մտնեմ բունիկս,
Կրկին հանգիստ նստիմ ի թուխս:
Ո՛հ, սառած են աժած ձուերս,
Նոր տի ջեռնուն, երեսն ձագերս»:

Ասի. «Ճնճղուկ, ահա կերթամ,
Շնորհակալ եմ, դու ողջ մնաս.
Արի նստիր քո տուն քո բոյն,
Վարձ մի ուղեր, Աստուած կուտայ,
Ձրկանք արի քեզ, ով ճնճուղ,
Մի բողբոքեր առ դատաւոր,
Բան մի հաներ ի դատաստանս:
Ձգիտեմ թէ ինչ փոխարինեմ,
Ասպնջական եղեր դու ինձ:
Թէ սիրես, թէ ախորժիս,
Ձքեղ տանեմ իշմիածին,
Վհարանիս մի անկիւնիկ
Գեղ վայելուչ չինեմ բունիկ.
Կուտն առատ է, միշտ վայելէ,
եւ դու լինիս երջանիկ»:
— «Ձէ, չեմ թողուր ես հայրենիք,
Անտառ, հովիտ ծաղկազարդիկ,
Իմ հովառուն աղատ վայրեր,
Դամ քո ջերմին օտար աշխարհ
եւ թաղկանամ արեւահար»:

Ուր, ասեն, թէ կան բազէներ,
 Սուր ճանկերով զիս բզկտեն:
 Ի Սանահին է խանձարուրս,
 Ապրիմ, մեռնիմ հայրենի տուն,
 Բաւ է բունիկս իմ սիրական,
 Թող քեզ մնայ քո վեհարան:
 Թէ վեհարանդ է շէն, պայծառ,
 Ընդէր թողուս շրջիս աստանդ.
 Ասեն անունդ է քո արծիւ,
 Բայց դու սիրես աւերակներ,
 Միթէ բու ես աւերակի,
 Որ չես սիրում շէն—շէն տեղերս:
 —«Է՛, չգիտես դու իմ վիճակ,
 Թէ Վարադայ սարի արծիւ,
 Ո՛հ, ճնճղուկ է դարձեր,
 Եւ ճնճղուկ միայն ի տանիս.
 Դորա համար խոնարհեր է,
 Ճնճղուկիդ հետ խօսում է:
 Ես սիրում եմ աւերակներ,
 Դու էլ սիրէ քո շէն բունիկդ.
 Մի հեռանար Սանահինէն,
 Թէ ապրիս և թէ մեռնիս,
 Միշտ երջանիկ ես դու, գիտես.
 Դերեզմանդ մօտ է սուրբերուն,
 Առ հովանեաւ տաճարներուն.
 Դո յիշատակ ես չեմ մոռնար:
 Թըլ—թըլ կտցիկդ ինձ խօսակ էր,
 Ձիս թեւադրեց բան ստեղծել,
 Ձոր նուիրեմ բոլոր զարմիդ,
 Որ ճնճղուկ անուն կոչինս:
 Է՛, դուք, մարդիկ հայրենափոխ,
 Ճնճղուկէն առէք յորդոր,
 Ուր ծներ էք, անդ մեռէք դուք,
 Ձեր գերեզման հայրենի հող:

ՅԱՆԵԼՈՒԱԾ

Մինչ րացաւ բան ճնճղկին,
 Երկնուց ամպեր որոտացին.
 Կուժ—կուժ թափէր առատ անձրև.
 Խցիս տանիքն էր ծակ ու ծակ,
 Ձուար անձրև վերէն ի վայր.
 Ասեն, Հայրիկ, քո տեղ փոխեմք,
 Ասի, կայ տեղ, որ չի կաթեր.
 Թողէք, լաւ է, մնամ խցիկս.
 Ջրհեղեղի անձրև չէ այս.
 Ինչ որ երկնուց թափի գետին,

Շնորհ և պարգև է երկնային:
 Անձրև, կարկուտ շատ եմ տեսել,
 Ձարքաշ լինել սովոր եմ ես:
 Ժողովրդին ձայն աղաղակ
 Լսեց երկինք, անձրև տուաւ.
 Օրհնեալ Աստուած, որ տայ անձրև
 Մերթ ի կանուխ, մերթ անաղան.
 Նա գիտէ, երբ է պիտոյ.
 Ձի մոռնար հաց հանապաղորդ,
 Թէ աղօթեմք մեք հաւատով:

1901 Ապրիլ 6 Սանահին:



ՍԿՋՐՈՒՄՔՆԵՐ Ե ԽՈՐՀՐԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Է Օ Թ Է Ի Յ.

Ձկայ խելօք բան, որ արդէն մտածուած
 չլինի, պէտք է փորձել միայն մի անգամ ևս
 մտածելու:

Մեջպէս է սովորում մարդ ծանաչել ինքն
 իրեն:—Դիտելով՝ երբէք, այլ միայն զօրձելով:
 Փորձիր պարտքդ կատարել, և կ'իմանաս ինչ
 կայ մէջդ:

Իսկ ի՞նչ է պարտքդ:—Սրուայ պահանջը:

Փշելը նուազել չէ, պէտք է մատներդ
 շարժել իմանաս:

Միայն խոհեմ մարդիկ, որ իրենց ուժերը
 ծանաչում են և չափով ու ճարտարութեամբ
 զօրձ գնում, հեռու կրթման տշխարհի մէջ:

Մի մեծ պահապանութիւն այն է, որ մար-
 դիկ իրենց աւելի մեծ բան են երեւակայում,
 քան են, և աւելի քիչ են գնահատում՝ քան
 արժանի են:

Երիտասարդը ի՞նչ ծանաղարհով այն
 խելքին հասնէ, որ պախարակելի և փառա-
 կար համարէ, ինչ որ բոլորն են անում, հա-